ՁԵՎ N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 115

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-042-0387-0100 կադաստրային ծածկագրով 0.76752 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր	07-042-0387-0100 կադաստրային ծածկագրով 0.76752 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից ներկայացված պայմանը՝ կառուցվող շենքերի և շինությունների շահագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին,

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պայմանը՝

ապահովել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից ներկայացված պահանջը: Ընկերությունը հայտնում է, որ հողամասի հարևանությամբ անցնում է 10ԿՎ լարման օդային գիծ, ուստի որևէ գործունեություն իրականացնելիս անհրաժեշտ է ստանալ ընկերության համաձայնությունը և պահպանել ՕԳ-ի անվտանգության գոտին:

4. ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ձորաղբյուր գյուղի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ.Դավթյան

Երևան, « 31 » « մայիսի » 2022թ.